

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

White House

atop to Beechwood
Washington D.C.

613.95

V-49

613.95

Մ-49

ԲԺ. ՄԵԼԻՔՅԱՆ

ՄՈՐՅԵՎ ՄԱՆԿԱՆ ԴԱՇՏԴԱՆՈՒԹՅՈՒՆԸ



610

153-155

ԴԵՏԶՐԱՏ

27 JUN 2013

613.95
Մ-49

№ 3 ԲԱՆՎՈՐՈՒՂՈՒ-ԳԵՂՋԿՈՒՂՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.ՌՈՂՋՍ.ՊՍ.ՀԵ.ԿԵ.Ն ՍԵՐԻՍ. № 3

610
153-ՍԵ

ԲՃ. ՄԵԼԻԿՅԱՆ


ՄՈՐ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1003
10302

(Խմբագրություն Առնոլդյանի Սանի. Համահարակ. բաժնի)

Ջ Ե Ռ Ն Ա Ր Կ

Պատգամավորական ժողովների համար



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏՈՐՍԿԱԶՈՒԹՅՈՒՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն - 1925

013
ՃՍ-ԸՃԻ

ՄՈՐ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

ՀՂԻ ԿՆՈՋ ԽՆԱՄՔԸ.

Յուրաքանչյուր կին պետք է լավ իմանա, վոր հղիութիւնը հիվանդութիւնն է: Չնայած դրան, հղիութիւնն այնքան մեծ փոփոխութիւնն է առաջ բերում կնոջ մարմնի մեջ, վոր հղի կինը չնչին պատճառից տկարանում է:

Այդ պատճառով եւ յուրաքանչյուր հղի կին պետք է ուշադրութիւն դարձնի իր առողջութեան վրա, վոր չվնասվի վոչ ինքը, վոչ էլ նրա զավակը:

Հղի կինը պետք է շարունակի վարել այնպիսի կյանք, ինչպես և հղիութիւնից առաջ, միայն պէտք է զգուշ լինի ծանր աշխատանքից՝ բեռ կրելուց, ծանր բան վերցնելուց: Հղի կնոջ համար վնասակար են յերկար ճանապարհորդութիւններ՝ ձիով, կառքով, յերկաթուղով: Ֆլասակար և նույնպես սար բարձրանալը: Բայց դա չի նշանակում, թէ հղի կինը վոչինչ չպետք է անի. անգործ մնալը, բոլորովին վոչինչ չանելը, ամբողջ որով պակեղը նույնպես վնաս է. հղի կինը կարող է անել տնային ամեն տեսակի սովորական, բայց վոչ ծանր գործ, միայն թէ չհոգնի:

Հղի կինը չպետք է մնա անքուն և գիշերը պէտք է քնի 8 ժամից վոչ պակաս:

Բարկութիւնը նույնպես վնաս է. վորքան նա հանգիստ մնա, այնքան հեշտ կանցնի հղիութիւնը:

Հղի կնոջ սենյակը, անկողինը պետք է մաքուր լինեն, բոլոր ավելորդ իրերը պետք է սենյակից դուրս հանվեն, իսկ ողբ շուտ-շուտ պետք է փոխել, բաց անելով պատուհանը կամ դուռը թէ ամառը և թէ, ձմեռը: Հղի կնոջ սենյակում շատ մարդ չպետք է լինի, վորովհետեւ ինչքան շատ մարդ լինի սենյակում, այնքան ողբ շուտ կ'կեղտոտվի, իսկ մաքուր ողբ հարկավոր է թէ հղի կնոջ յեզ թէ ցրա արգանդում զտվող զավակի համար: Հղի կինը պետք է հսկի իր մաքրութեան վրա. 1) նա պետք է շուտ-շուտ փոխի անկողնու սպիտակեղենը, շաբաթը մեկ անդամ պետք է արևին տա անկողինն ու լավ թափ տա, վոր վոչի չմնա վրան, նույնպես պետք է շուտ-շուտ փոխի

իր սպիտակեղենը. 2) հղի կինը պետք է ուշադրութիւն դարձնի իր մարմնի և մանավանդ սեռական գործարանների մաքրութեան վրա, շուտ-շուտ լվանա արտաքին գործարանները, լողաճառք բնակացում, բայց վոչ սառը ջրում: Սառը ջրում լողաճառք վնասակար է:

Հագուստը.— Հագուստը պետք է արձակ լինի, վոր չսեղմի փորն ու կուրծքը, մեծացող արգանդի համար պետք է ազատ տեղ լինի, իսկ նեղ հագուստը կխանգարի արգանդի մեծանալուն, և նրա միջի գավազը կանոնավոր չի աճի ու լավ չի զարգանա:

ԾՄԵՐԻ ԽՆԱՄՔԸ.

Առաջին անգամ հղիացած կինը պետք է մեծ ուշադրութիւն դարձնի իր ծծերի պտուկների վրա: Յերբեմն պտուկները տափակ են լինում, ու նորածին յերեխան չի կարողանում նրանց բերանով բռնել ու լավ չի ծծում, իսկ դրա հետևանքն այն է լինում, վոր կաթը հավաքվում և ծծերի մեջ, թթվում կամը ծծերի բորբոքում առաջ բերում, ծծերի մեջ թարախ է հավաքվում, հիվանդացած ծիծը ծակվում է մեկ կամ միքանի տեղից ու սաստիկ տանջում մորը ու զրկում յերեխային կանոնավոր սննդից: Ուստի պետք է ամեն որ լվանալ ծծերի պտուկները, պետք է պոկել նրանց վրայի կլեպուկը, յերբեմն պետք է արագով պտուկները լավ արորել, վորպեսզի նրանց վրայի կաշին չկոշտանա ու յերեխայի ծծելիս հեշտութեամբ չճարճքի: Յեթե պտուկները տափակ են, պետք է ժամանակ առ ժամանակ բռնելով նրանց յերկու մատով՝ դուրս քաշել, ձգել:

ՓՈՐԻ ԽՆԱՄՔԸ.

Միքանի անգամ հղիացած կնոջ փորի մկանունքներն ու կաշին կախ ընկած են լինում. դա շատ վնաս է հղի կնոջ համար, ուստի պետք է կապել կտորից կարած լայն դոտի, վոր փորը լավ բարձրանա, և արգանդը լավ զարգանա, հակառակ դեպքում արգանդն ել կծովի ու կանոնավոր չի մեծանա:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ՈՒՏԻ ՀՂԻ ԿԻՆԸ.

Ուտելիքը պետք է լինեն սովորական, թեթև ու հեշտ մարսվող կերակուրներ, որ.՝ կաթ, մածուն, ձու և այլն: Հղի կինը պետք է լավ սնունդ ստանա, վորովհետև սնունդը հարկավոր է թե իրեն և թե զավակի համար. պեճ է ուտել քիչ-քիչ, բայց շուտ-շուտ, սոված չմնալ և չցնել փորը դժվարամարս կերակուրներով, մանավանդ գիտեք բնական անառ:

Յերբեմն հղի կինը փսխում է կամ սրտախառնութիւն է ունե-

նում: Այդ դեպքում պետք է քիչ-քիչ ուտել, պետք է գործածել միայն ջրալի և վոչ տաք կերակուրներ. իսկ յեթե այդպիսի տնական միջոցները չեն ոգնում, և փսխումը շարունակվում է ու թուլացնում հղի կնոջը, պետք է առանց ուշացնելու դիմել բժշկին:

Հղի կինը չպետք է գործածի գինի, ողի, կոնյակ, խմելու համար պետք է գործածի ջուր, թեյ, կաթ և այլն: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր հղի կին պետք է հոգ տանի և իր դուրս գնալու մասին. ժամանակին և կանոնավոր դուրս գնալը նույնքան անհրաժեշտ է, վորքան և սնունդ ստանալը:

Յեթե հղի կինը տկար է, պետք է դիմել բժշկին և առանց բժշկի խորհրդի վոչ մի դեղ չընդունել, վորովհետև հղիացածի ընդունած դեղն անցնում է արյան միջոցով արգանդում գտնվող յերեխային: Կան այնպիսի դեղեր, վորոնք անմիջապես ազդում են յերեխայի վրա, ֆլասում կամ մեռնում նրան, իսկ այդ բանի հետևանքը լինում է վիժում:

Հղի կնոջ համար ֆլասակար են հաճախակի սեռական հարաբերութիւնները: Հղիութեան վերջին յերկու ամսվա ընթացքում պեճ է բոլորովին խուսափել սեռական հարաբերութիւններից: Հաճախակի կրկնվող և հղիութեան վերջին ամսին կատարվող սեռական մերձավորութիւնը ֆլասում է հղիութեանը, առաջ է բերում վիժում կամ վաղորոք ծննդաբերութիւն:

ՎՈՏՔԵՐԻ ՈՒՌՈՒՑՔԸ.

Յերբեմն հղի կնոջ վոտքերն ուռում են: Դրա ամենագլխավոր պատճառը հետևյալն է. մեծացած արգանդը ճնշում է փորի ներքևի մասի յերակները, վոտների արյունը լավ չի ծծվում վեր, կանգ է առնում նրանց ներքևի մասում, և դրանից ել նրանք ուռում են. բացի այդ, վոտները կարող են ուռել և արյան պակասութիւնից ու պլոճիկների (յերիկամունքների) տկարութիւնից: Ապա ուրեմն վոտներն ուռելուց պես պեճ է գիմել բժշկին, վոր նա ասի՝ ինչից է դա առաջացել: Տկարութիւնից առաջ յեկած ուռուցքի դեմ բժիշկը դեղեր կնշանակի, կամ գուցե խորհուրդ կտա ընդհատել հղիութիւնը, վորովհետև յերբ կինը յերիկամունքների հիվանդութիւնն ունի, նա չի կարող հիվանդութիւնը հասցնել մինչև վերջը, մինչև անգամ կարող է մահանալ: Յերիկամունքի տկարութիւնն իմացվում է մեղի քննութիւնից, ապա ուրեմն հղիութեան ժամանակ հարկավոր է հղի կնոջ մեղը տալ քննութեան և հավաստիանալ, վոր յերիկամունքները տկար չեն:

Յեթե վոտների ուռելը տկարութիւնից չէ, այլ արգանդի ճնշումից է առաջ յեկել, այն ժամանակ պետք է ամեն որ առավոտները

փաթածի վրայ վրտնեղը, սկսած մասներից մինչև աղբը, իսկ յերկրները արձակել փաթածանը: Բացի դրանից, պառկելիս պետք է վրտնեղը բարձր տեղավորել, որինակ՝ մի բարձի վրա: Յերբեմն հղի կինը ստանում է ներվային հիվանդություն, վորից նա շուտ-շուտ ուշաթափվում է. այդ հիվանդությունը կապ չունի վոչ գեվերի յեվ վոչ ել չարհերի հետ. դա չարոց չէ, ինչպես սիրում են բացատրել զանազան պառափներ ու տատմերներ: Այդ ներվային հիվանդությունը կապված է հղիութեան հետ, և յերբ հղի կինն սկսում է շուտ-շուտ ուշաթափվել և ներվային ցնցումներ կատարել, պետք է անմիջապես դիմել բժշկին. վոչ մի աղոթք այստեղ չի ոգնի, և յեթե հղի կնոջը թողնեն այդ դրութեան մեջ, նա շատ շուտ կմեռնի: Հղի կնոջ համար սա շատ լուրջ հիվանդություն է, և դրանից շատ հղի կանայք են մեռնում:

Հղի կինը հղիութեան վերջին ամսին պետք է դիմի բժշկին, վոր իմանա՝ 1) արդյոք ուղիղ է յերեխայի դերքը արդանդի մեջ, ծոված չէ՞ նա, 2) կանոնավոր են զարգացած իր ծննդկան մասերը, 3) կանոնավոր և ընթացել հղիութեանը և 4) կարող է արդյոք ինքը կանոնավոր կերպով, առանց բժշկի ոգնութեան ծնել:

ԾՆՆԴԱՆԻՆՆԻ ՅԵՎ ԾՆՆԴԿԱՆԻ ԽՆԱՄՔԸ.

Ինչպես հղիութեանը հիվանդություն չէ, նույնպես ել ծննդաբերութեանը հիվանդություն չէ, բայց մի փոքրիկ անկանոնություն, մի փոքրիկ անզգուշություն բավական է, վոր սովորական առողջ ծննդաբերութեանը փոխվի հիվանդութեան և կորստարեր հետևանքներ ունենա:

ԾՆՆԴԿԱՆԻ ԽՆԱՄՔԸ.

Հղիութեանը շարունակվում է մինչև ծննդյան ցավերի սկսվելը, իսկ դրանից հետո սկսվում է ծննդաբերությունը: Հղի կնոջ ծննդյան ցավերն սկսվելուն պես պե՛ս պե՛ս է հրավրել մանկաբարձուհուն: Ծննդաբերութեան ժամանակ ծննդկանին ոգնել և խնամելը մի մեծ գիտություն է, վորը պահանջում է յերկար տարիներ և ուսում, աշխատանք և փորձառություն: Իսկ այդ պահանջներն բավարարում է միայն մանկաբարձուհին, ուստի նրան ել պե՛ս է դիմել և վոչ թե գյուղական տատմորը, վորը զուրկ է ամենատարրական տեղեկութեաններից ծննդաբերութեան մասին, չի գիտակցում, թե վորքան լուրջ բան է ծննդաբերությունը: Տատմերները գաղափար չունեն ծննդկանի համար անհրաժեշտ մաքրութեան մասին, նրանք ամեն տեսակ կեղտոտ բանի ձեռք են տալիս ու ձեռքերն առանց լվանալու մոտենում են մաքուր ծննդկանին ու նրան ևս կեղտոտում: Տղետ

պառափները շատ անգամ թարախոտ ծննդկանից հետո առանց մաքրվելու գնում են մի ուրիշ մաքուր ծննդկանի ոգնելու և այսպիսով կեղտոտում, վարակում նրան: Ծննդկանի համար ամենազլխավորը մաքրութեանն է: Ամեն մի ծննդկան պետք է լավ իմանա, վոր արգանդը շատ հեշտութեամբ կարող է վարակվել ամենաչնչին փոշուց անգամ, ուստի հենց ինքը պետք է հսկի, վոր կեղտոտ ձեռքերով իրեն չմոտենան: Միայն ուսում ստացած մանկաբարձուհին գի՛տի ինչ է ձե՛նգրանքը, ինչ է ձե՛նգրաբերությունը. նա գիտե, թե ինչ հեշտութեամբ կարող է վարակել ծննդկանի արգանդը: Ուսում ստացած մանկաբարձուհին կարող է հասկանալ ձե՛նգրաբերության անկանոնությունը յեվ հարկ չեղած դեպքում բժշկին կհրավրե՛ս, վոր ազատի ծննդկանի և զավակի կյանքը: Չպետք է մոռանալ, վոր ամենափոքրիկ անզգուշությունը կարող է մահվան պատճառ դառնալ թե ծննդկանի և թե զավակի համար:

Ծննդկանի սենյակը, անկողինն ու սպիտակեղենը պետք է շատ մաքուր լինեն, սպիտակեղենը պետք է փոխել շուտ-շուտ: Կեղտոտած սավանն ու վերմակը պետք է փոխել անմիջապես: Բացի մաքրութեանից, ծննդկանի համար շատ անհրաժեշտ է և հանգստությունը. տնեցիք բոլորն ել պետք է ունենան գիտակցություն և հանդիսա թողնեն ծննդկանին. նրա սենյակում վոչ մի աղմուկ չպետք է լինի:

Ծննդկանը պե՛ս է մե՛ս անկողնում վոչ պակաս քան 10—12 ուր. դա նրա համար է, վոր օմեծացած արգանդը նորից փոքրանա և իր առաջվա չափն ստանա: Յերբ ծննդկանը քիչ է մնում անկողնում, նրա արգանդը ժամանակին չի փոքրանում, փոքր մնում է մեծ, և առաջ են գալիս զանազան կանանց հիվանդություններ: Ծննդաբերութեան ժամանակ սենյակից պետք է հեռանան ավելորդ մարդիկ: Յեթե ծննդաբերութեանը տևում է յերկար, և ծննդկանն սկսում է թուլանալ, պետք է անմիջապես հրավրել բժշկին, վոր նա շուտ վերջացնի ծննդաբերությունը, հակառակ դեպքում ծննդկանը և զավակը կամ նրանցից մեկն ու մեկը կվախանան: Ծննդկանը պետք է ծնի անկողնում, պառկած դրութեան մեջ. շատ տեղ սովորություն կա ծննդկանին կանգնած կամ չորած դրութեան մեջ պահել: Զո՛րած կամ կանգնած ձե՛նգրանքը շատ է հոգնում յեվ ուժասպառ լինում, վորը պատճառ է դառնում ծննդաբերութեան յերկարելուն: Ուժասպառ ձե՛նգրանքի արգանգի մկանուկները կորցնում են իրենց գորւթյունը յեվ չեն կարողանում ժամանակին դուրս մղել արգանգից զավակին: Ծննդկանը պետք է աշխատի ուժերը չկորցնել, արգանդի ամեն անգամ կծկվելիս փորի մկանուկներով ոգնություն գալ արգանդին, իսկ արգանդի կծկումների միջանկյալ ժամանակամիջոցում նա պետք է հանդիսա մնա և ուժերը ժողովի, վոր մյուս կծկումի ժամանակ ոգնի արգանդին: Կանո-

նաւոր են արգանդի կծկումները թե վոչ, կհասկանա դա մանկաբարձուհին և հարկ յեղած ժամանակ միջոցներ գործ կդնի:

Ծնելուց հետո առաջին օրերը (2—3) արգանդից արյուն է հոսում, հետո արյունը կտրվում է, արյունախառն ջրեր են հոսում, հետո այդ ջրերը սպիտակ են դառնում ու բոլորովին կտրվում են: 9—10-րդ օրը ծննդկանը մաքրվում է բոլորովին և կարող է վեր կենալ անկողնուց, բայց լավ է, յեթե մի յերկու օր ել պոկած մնա և անկողնուց վեր կենալուց հետո իսկույն ևեթ գործի չդիմի: Ինչպես ասացինք, ծնելուց հետո առաջին 2—3 օրը արյուն է հոսում արգանդից, ահա այդ ժամանակը վտանգավոր է արգանդի վարակվելու տեսակետից: Այդ օրերն արգանդի յերակները բաց են և շատ շուտ կարող են կեղտոտվել, և արյան վարակում կարող է առաջ գալ: Այդ օրերն արգանդը նման է բացված վերքի, և ինչպես բացված վերքը շուտ կեղտոտվում ու թարախոտվում է, այնպես էլ արգանդը կարող է հեշտությամբ թարախոտվել և արյան վարակում տալ:

Վերն ասացինք, վոր ծնելուց 2—3 օրից հետո արյունը դադարում է, և արյունախառն ջրեր են հոսում, վորոնք միքանի օրից հետո իսպառ կտրվում են. կանոնավոր կերպով խնամելիս այսպես է լինում, բայց յերբ անխնամ են թողնում ծննդկանին կամ ծննդաբերությանը լավ չեն հսկում, արյունը չի կտրվում, ավելի շատ է հոսում, ծննդկանը նիհարում է, ուժից ընկնում, կամ ծննդկանը փոխանակ անկողնուց վեր կենալու, սկսում է տաքացնել և որեցոր վագոտանալ: Այդպիսի դեպքում անպատճառ պետք է դիմել բժշկին:

Ծնելուց հետո պետք է ուշադրություն դարձնել, վոր յերեխայից հետո արգանդից դուրս գա և ընկերքը, վորի միջոցով է արգանդի մեջ գտնվող գավակը ստանում իր սնունդը:

Յերբեմն պատահում է, վոր ընկերքի մի կտորը կամ պտյանի մի փոքրիկ մասը մնում է արգանդի մեջ. այդ դեպքում ծնելուց հետո արգանդի արյունը չի դադարում, արգանդը չի փոքրանում: Ընկերքի մնացած մասնիկն սկսում է կաղմալուձվել արգանդի մեջ և առաջացնում վարակում, իսկ այս բոլորի հետեանքը լինում է արյան վարակում, վորը միշտ էլ վերջանում է ծննդկանի մահով: Իսկ յերբ ծննդկանին հսկում է մանկաբարձուհին կամ բժիշկը, նա կարող է անմիջապես վորոշել՝ դուրս է յեկել ընկերքը ամբողջովին թե վոչ, և միջոցներ ձեռք առնել մնացորդը հանելու:

Ծննդկանի ամենազխավոր հիվանդությունները հետևյալներն են.

1) եկլամպսիան—ուշաթափությունը, վորի մասին վերեն արդեն ասել ենք հղիության մասին պատմելիս. ծննդկանն էլ հղի կնոջ պես յենթակա յե այդ հիվանդությանը: Շուտ-շուտ կրկնվող ուշաթափության դեպքում անպատճառ պետք է դիմել բժշկին և իմանալ՝ ինչ ուշաթա-

փություն է, վոր ժամանակին ոգնություն հասնի: Ծնելուց հետո յեկ կարող է լինել այդ հիվանդությունը, ուստի ծննդկանի շրջապատողներին վրա մեծ պարտականություն կա՝ հենց առաջին ուշաթափությանից հետո բժշկին հրավիրել ծննդկանին քննելու և ուշաթափության պատճառն իմանալու: Այս հարցում որեր չի կարելի սպասել. այս դեպքում մինչև անգամ միքանի ժամ ուշացնելը մեծ նշանակություն է կորստաբեր հետեանք կարող է ունենալ: 2) յերկրորդ վտանգավոր տկարությունը ծննդկանի մարմնի մկանույթների կծկումներն են. այս հիվանդությունը միշտ էլ վերջանում է ծննդկանի մահով:

Առաջին հիվանդության պատճառները մինչև այժմ ել լավ հայտնի չեն, բայց յերկրորդը առաջ է դալիս արգանդը կեղտոտելուց: Յեթե ծննդաբերությունը կատարվել է մաքուր, յերկրորդ հիվանդությունը յերբեք չի լինում: Յուրաքանչյուր կին պետք է լավ իմանա, վոր ծննդկանի կյանքը մեծ չափով կախված է մանկաբարձուհու և ծննդկանին խնամողի ձեռքերի մաքրությունից:

Ծննդաբերությունից հետո շատ կանանց փորը մեծանում ու կախ է ընկնում: Մեծացած արգանդը փորը պահում էր ձգված. արգանդի փոքրանալուց, այսինքն յերեխային ծնելուց հետո փորի ձգված մասերը թուլանում են, այդ պատճառով էլ փորը կախ է ընկնում: Դրա առաջին առնելու համար հարկավոր է ծննդաբերությունից հետո միքանի ժամանակ փաթաթել փորը լայն փաթաթանով: Ծննդկանի ուտելիքը պետք է լինի թեթե կերակուրներից՝ կաթնեղեն, ձու, միս և պտուղներ, կանաչեղեն (բացի սուր և կծու տեսակներից—սոխ, պղպեղ), վորը կարելի յե և նույնիսկ հարկավոր է գործածել անկողնուց վեր կենալուց հետո:

ՆՈՐԱԾՆԻ ԽՆԱՄՔԸ.

Նորածինն էլ պահանջում է իր խնամքը: Սկսեք հենց ծնվելուց, յերեխայի ծնվելուց հետո անմիջապես մանկաբարձուհին կապում է պորտը յերկու տեղից, մեկը յերեխայի—նորածնի—փորի մոտ, իսկ մյուսը մեկ կամ յերկու վերջով հեռու, հետո կտրում է պորտը առաջին կապի մոտ:

Հայ գյուղերում, մինչև անգամ քաղաքներում, սովորություն կա նորածնի մարմնին աղ քսել, ինչպես անում են այդ հորթի ծնվելիս. դա բոլորովին ավելորդ է.—հորթին աղ են քսում, վոր կովը լեղի և մաքրի հորթին, իսկ յերեխային աղ քսելը բոլորովին ավելորդ է. դրանից վոչ մի ոգուտ չկա:

Յերեխային պետք է մաքուր ջրում միքանի անգամ լվանալ, փոխելով ամեն անգամ կեղտոտ ջուրը. լողացնելիս պետք է աշխատել, վոր նրա աչքերի մեջ կեղտոտ ջուր չընկնի, վորպեսզի նորածնի աչքե-

ըր չհիվանդանան. (իսկ այդ պատահում ե շնորհիվ մոր սեռական գործարանների հիվանդութեան): Պետք ե լավ մաքրել նրա աչքերը և աչքի դեղ կաթիցնել. թե ինչ դեղ, այդ մասին յուրաքանչյուր մանկաբարձուհի գիտե: Յեթե ծննդաբերութեանը յերկար ե տեւել, և յերեխան ծնվելուց հետո չի ձշում ու չի շնչում, պետք ե ամեն միջոց գործ գնել նորածնի շնչառութեանը դարթեցնելու համար: Ձշնչող նորածնի շնչառութեանը դարթեցնելու համար պետք ե շփել յերեխայի կուրծքը, ձեռքերն ու վոտները, խփել նստատեղի փափուկ մասերին. յեթե այդ չի ոգնում, հարկավոր ե նորածնին պակեցնել բոլորովին մերկ, ձեռները տանել դեպի գլուխը ու վրա բերել դեպի կուրծքը, կամ պահել նորածնին ուղղահայաց դրութեամբ, բռնելով նրա թևերի տակից՝ բարձրացնել ու գլխի վրա շուռ տալ ու նորից վերադարձնել նախկին դրութեանը: Այս բոլորը պետք ե անել ծնվելուն պես, հակառակ դեպքում կուշանա և շնչառութեանը չի դարթնի, ու նորածինը կմեռնի:

ԾԾԿԵՐ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ.

Հայտնի յե, վոր մինչև մի տարեկան հասակը մեծ քանակութեամբ յերեխաներ են հիվանդանում ու մեռնում: Մահացող յերեխաների թիվը մեծ ե մանավանդ այն յերկրներում, վորտեղ ազգաբնակչութեանը գեռ մուրթ ե, կուլտուրայես հետամնաց, անգրագետ և այլն: Մեղ մոտ ել յերեխաների մահացութեան տոկոսը փոքր չի: Ինքնըստինքյան այստեղ մի հարց ե ծագում, թե ինչո՞ւմն ե այդ յերեւոյթի պատճառը և ի՞նչպես կարելի յե կովել դրա դեմ:

ԾԾԿԵՐ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Այդ հարցը մանրամասն ուսումնասիրութեան ե յենթարկված և գտնված ե, վոր ծծկեր յերեխաների հիվանդութեանների և մահվան գլխավոր պատճառը նրանց վատ խնամելն ե: Յերեխայի մարմինը, նրա կազմվածքը խիստ նուրբ ու քնքուշ ե. բավական ե լինել դեպի նրանց անզգուշ. անել մի վորեւ սխալ քայլ, վորպեսզի դրա հետեանքով առաջանա այս կամ այն շատ վտանգավոր և հաճախ մահաբեր հիվանդութեանը: Ուրեմն այսպիսի հետեանքների առաջն առնելու համար ամենազլխավորն այն ե, վոր ամեն մի մայր իմանա յերեխայի խնամելու ձևը, քաջ ծանոթ լինի նրան վերաբերող գլխավոր առողջապահական պահանջների հետ:

Հենց այդ ձևերի ու պահանջների մասին ել մենք կխոսենք այստեղ:

ԾԾԿԵՐ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՓԱԹԱԹԵԼՈՒ ՅԵՎ ՀԱԳՅՆԵԼՈՒ ՁԵՎԸ.

Մեղ մոտ մի վատ սովորութեան կա. հենց ծնված որից յերեխային փաթաթում են բավական ամուր, դանազան շորերի, կտորների

մեջ և այդպես վարվում նրա հետ յերկար ամիսների ընթացքում: Այսպիսով պինդ փաթաթած յերեխան չի կարողանում ազատ շարժել իր ձեռները, վոտները, մարմինը, չի կարողանում ազատ կրծքով շնչել, իսկ դրա հետեանքով նրա մարմնի մեջ արյան շրջանառութեանը կատարվում ե վատ, և մանուկն աճում և դարգանում ե դանդաղ: Այդ սովորութեանը պիտի վերջ դրվի: Բոլորովին սխալ ե այն տարածված կարծիքը, թե յեթե յերեխային չկապեն, նրա վոտները կամ այլ մասերը կծուվեն, կամ յերեխան չի կարողանա քնել:

Մեր մեծ կենտրոններ (որ՝ Մոսկւայի) որինակը ցույց ե տալիս, վոր յերեխային ազատ պահելուց վոչ մի վնասակար հետեանք չի առաջանում, այլ, ընդհակառակը, նա ավելի յե աճում, դարգանում ու հանգիստ քնում:

Ծնվելուց հետո առաջին ամիսներում յերեխային պետք ե փաթաթել, այն ել վոչ ամուր, նրա մարմնի միայն ներքեի մասն ու վոտիկները, իսկ կուրծքը և ձեռքերը պիտի մնան ազատ: Մարմնի վերեի մասի վրա պիտի հագցնել շապիկ և վերին հագուստ:

Թե նրա փաթաթելու շորերը և թե շապիկն ու շորերը պատրաստած պիտի լինեն կակուղ, վոչ կոշտ կտորից, վորպեսզի չհարեն նրա մարմինը, չանհանգստացնեն նրան:

Յերեխային պիտի հագցնել ձմեռ ժամանակը տաք շորեր, բայց վոչ այնքան, վոր նա քրտնի, չկարողանա շարժել մարմնի մասերը: Տանը յերեխայի գլուխը չի հարկավոր կապել:

ՅԵՐԵՆԱՅԻՆ ՊԻՏԻ ՄԱՔՈՒՐ ՊԱՀՆԵԼ.

Յերեխայի բոլոր շորերը պետք ե փոխել և լվանալ վորքան կարելի յե հաճախ և չսպասել, վոր նրանք կեղտոտվեն:

Իսկ ինչ վերաբերում ե թացացրած ու կեղտոտած շորերին (փաթաթաններին), այդպիսիները պիտի փոփոխվեն անմիջապես, վորովհետեւ նրանք յերեխայի տակը մնալով՝ գրգռում են նրա նուրբ կաշին, առաջացնում կաշվի հիվանդութեաններ և խիստ անհանգստացնում նրան, խանգարում նրա քունը:

Թացացրած շորերը չի կարելի միայն չորացնել և գցել յերեխայի տակը, այլ անհրաժեշտ ե անպայման լվանալ:

Պետք ե մաքուր պահել նաև յերեխայի մարմինը:

Մինչև վեց ամիսը նրան հարկավոր ե լողացնել ամեն որ, իսկ դրանից հետո որամեջ:

Լողացնելիս չի հարկավոր գործ անել անուշահոտ սապոն, այլ սովորական, բայց լավ տեսակից:

Բացի լողացնելուց, ամեն անգամ կեղտոտելուց հետո պետք ե լվանալ և վոչ միայն սրբել նրա կեղտոտած մարմնի մասերը, այլ և լավ չորացնել մաքուր շորով:

Չի կարելի լողացնել յերեսային այն տաշտում, ուր լվացք են անում, կամ լողանում են մեծերը: Յերեսայի տաշտը պետք է լինի առանձին, իսկ յեթե այդ հնարավոր չէ, և տաշտը գործ է անում նաև ուրիշներն համար, ամեն անգամ պետք է այդպիսին լավ լվանալ յեռացրած ջրով:

Յերեսայի բերանը ներսից վոչ սրբել, վոչ լվանալ և հարկավոր, վորովհետև դրանից նա կարող է փլասավել, բերանի մեջ կարող են անցնել կեղտը, վնասակար մանրեններ և առաջացնել հիվանդություն:

Մանուկի աչքերը, քիթն ու ականջները պիտի մաքրել, լվանալ ամեն օր կակուղ շորի կամ մաքուր բամբակի կտորով:

Մի բան ևս չպետք է մոռանալ. ամեն անգամ նախ քան յերեսային դիպչելը կամ նրան լողացնելը և այլն, պետք է անպայման մաքուր ձեռքեր ունենալ, նախորոք լվանալ նրանց սապոնով—կեղտոտ ձեռքերով հեշտությամբ կարելի չէ մտցնել նրա մարմինը զանազան հիվանդությունների մանրեններ:

Նույն նկատառումներով չպետք է համբուրել յերեսային բերանից, շրթունքներից և առհասարակ քիչ համբուրել նրան, իսկ ուրիշներին պիտի բոլորովին արգելել համբուրել, վորովհետև համբուրել միջոցով շատ դեպքերում յերեսան վարակվում է մի շարք վտանգավոր հիվանդություններով, ինչպես են, որինսակ, թորախտը, սիֆիլիսը և այլն:

Յերեսաները սովորություն ունեն դեպի բերանը տանել այն ամենը, ինչ նրանց ձեռքն է ընկնում: Ուստի նրանց չպիտի տալ կեղտոտ իրեր, փալասի կտորներ և այլն, իսկ նրա խաղալիքները պիտի լինեն այնպիսին, վորպեսզի հնարավոր լինի նրանց մաքրել, լվանալ: Այդ տեսակետից փլասակար են, որինսակ, կտորից կարած խաղալիքները, և հարմար են փայտից պատրաստածները:

ՅԵՐԵՍԱՅԻՆ ՈՂՆԵՎ ԼՈՒՅՍ Ե ՀԱՐԿԱՎՈՐ.

Շատ ժամանակ յերեսային մրսելուց պահպանելու նպատակով ծնողները զրկում են մանուկներին մի անհրաժեշտ բանից՝ մաքուր ուղից: Բավական է, յեթե դրսում մի քիչ ցուրտ լինի, յերեսային փակում են սենյակում (խրճիթում) հաճախ ամբողջ ձմեռը և դուրս են տանում միայն զարնան տաք որերն սկավելուց հետո:

Դա մի շատ սխալ և փլասակար քայլ է: Յերեսան շնչելու համար պիտի մաքուր ուղ ունենա հենց սենյակումն էլ, բայց միայն այդ բավական չէ: Նրան ամեն օր մի յերկու ժամով պիտի դուրս տանել նաև ձմեռը, յեթե, իհարկե, յեղանակը շատ վատ չէ, քամի չկա, հագցնելով նրան տաք շորեր:

Մեծ նշանակություն ունի յերեսայի առողջության համար արևը, նրա ճառագայթները: Յեթե հնարավորություն կա, յերեսային պահել

ու քնացնել այն սենյակում, ուր ձմեռն արև է ընկնում: Յեթե այդ հնարավոր չէ, պիտի աշխատել արև որերը նրան միքանի ժամ պահել արևի տակ, բայց վոչ ամառվա շոգ յեղանակին:

Յերը ձմեռը արեգակային օր և, նրան անպայման պիտի դուրս տանել:

ԾԾԿԵՐ ՅԵՐԵՍԱՅԻ ՄԵՆՈՒՆԻԸ.

Մոր կաթը յերեսայի համար մեծ նշանակություն ունի: Նրա տմեն մի կաթիլը յերեսայի համար առողջություն և ուժ է. վոչ մի ուրիշ բան չի կարող փոխարինել մոր կաթին: Դրա համար մինչև 9 ամիս յերեսային պիտի կերակրել միայն և միայն կրծքով:

Բայց դա դեռ բավական չէ. մայրը պիտի իմանա և այն, թե ինչպես ծիծ տալ, քանի ժամը մի անգամ, քանի բույս կերակրել, վորովհետև անկանոն կերակրելուց պատահում են զանազան ստամոքսային հիվանդություններ, վորոնք կարող են խիստ փլասել յերեսային և մինչև անգամ նրան գերեզման տանել:

Չի կարելի յերեսային ծիծ տալ ամեն անգամ, յերը նա այս կամ այն պատճառով ճչում, լաց է լինում:

Հենց սկզբից պիտի սովորեցնել նրան հետևյալ կարգին. ցերեկը ծիծ տալ ամեն յերեք ժամը մի անգամ, գիշերը 6—8 ժամ չկերակրել, ծիծ չտալ: Չպետք է վախենալ, թե այդպիսով յերեսան սոված կմնա և չի մեծանա և այլն: Դա սխալ է. միայն պետք է ամեն անգամ ծիծ տալիս կերակրել նրան 10—15 բույս, վորպեսզի նա կշտանա:

Ամեն անգամ կերակրելիս պիտի տալ միայն մի ծիծը, հետևյալ անգամ (3 ժամից հետո) մյուսը: Յեթե յերեսան ցերեկը յերկար է քնում, որինսակ՝ չորս ժամ, և այդպիսով կերակրելու ժամն անցնում է, պետք է իր ժամանակին նրան արթնացնել և ծիծ տալ:

Ծիծ տալուց առաջ ամեն անգամ անհրաժեշտ է մաքուր լվանալ թե ծծի պտուկը և թե ձեռները, վորպեսզի յերեսայի բերանը չկեղտոտվի:

ՅԵՐԵ ՊԻՏԻ ԿԵՐԱԿՐԵԼ ՅԵՐԵՍԱՅԻՆ ԲԱՅԻ ՄՈՐ ԿԱԹԻՅ ՆԱՅԵՎ ՈՒՐԻՇ ԲԱՆԵՐՈՎ.

Ինչպես ասացինք, մինչև 9 ամիսը յերեսային պիտի տալ միայն մոր կաթը և ուրիշ վոչ մի բան:

Իսկ վեց ամսից հետո կարելի չէ և պետք է սկսել սովորեցնել նրան նաև ուրիշ կերակրի, այն էլ աստիճանաբար և վոչ ամառ ժամանակ, այլ ավելի լավ է աշնանը կամ ձմեռը:

Սկզբում ուրիշ կերակուր յերեսային պետք է տալ միայն մի անգամ, փոխարինելով նաև մոր կաթը:

Ավելի լավ ե սկսել կաթնապուրից, վորը պետք ե պատրաստել այսպես: Վերցնել յերկու թեյի գդալ բրինձ կամ ուրիշ կրուպա (որի՛նակ՝ այսպես կոչված «մաննի կրուպա») ու միքիչ աղի հետ յեփացնել մի բաժակ ջրի մեջ. յերբ նա յեփում ե թանձրանում ե, ավելացնել կես բաժակ կովի հում կաթ ու մի թեյի գդալ շաքարավազ, նորից յեփացնել, բայց այնքան, վոր բրնձի առանձին կուլտեր չստացվեն: Ապուրը պիտի ուտեցնել յերեխային փոքրիկ գդալով:

Յեթե յերեխան ընդունում ե ապուրը, ե ստամոքսը չի խանգարվում, այն ժամանակ փոքր ինչ հետո ապուրը կարելի յե յեփել մաքուր կաթով, առանց ջրի:

Միքանի շաքարից հետո յերեխային այդպիսի կերակուր կարելի յե տալ որական յերկու անգամ, միքանի ժամանակ հետո յիլ յերեք անգամ ե այլն, այնպես, վոր 10-ըդ ամիսը նա նոր մոր ծիծը ստանա միայն որական մեկ-յերկու անգամ: Տաս ամսից հետո, յերբ յերեխան սովորել ե ուտել մի շաք ուրիշ կերակուրներ, նրան կարելի յե կտրել ծծից:

Բացի ապուրից յերեխային կարելի յե տալ յեփած մրգի ջուր, կարտոֆիլի այուրից պատրաստած ապուր (կիսել), իսկ ութ ամսում յեփած ե տրորված կարտոֆիլ, գազար, շաքարավազով կակղացրած մաքուր ու չորացրած հաց (սուխարի) ե այլն: Լավ ե յերեխային տալ այդ ժամանակվանից նաև մածուն, բայց վոչ թթու, այլ թարմ, 4-5 ժամվա մերածը:

Անշուշտ փաստակար ե յերեխայի համար այսպես կոչված «սոսկան» (ծծակը), ե այդպիսին տալ չի կարելի:

Մեր դյուղերում կա մի շատ վատ սովորութիւն կս. իբր թե յերեխային հանգստացնելու, զբաղեցնելու կամ կշտացնելու համար, հացը ծամում են, փաթաթում մի կտոր մաքուր շորի մեջ ե տալիս յերեխայի ձեռքը. նա ժամերով ծծում ե այդ ե այդպիսով չի խանգարում մորը:

Բայց ամեն մի մայր, վորն այդպես ե վարվում իր յերեխայի հետ, պիտի իմանա, վոր դրանով նա խիստ վտանգում ե իր գովակի կյանքն ու առողջութիւնը. յերեխային շատ հաճախ փասում ե վոչ թե միայն հացը, այլ գլխավորապես այն կեղտը, այն փաստակար մանրիկները, վորոնք մեծ քանակութամբ անցնում են նրա ստամոքսը թե հացից ե թե շորից:

Իր յերեխային սիրող, նրա առողջութիւնը ցանկացող մայրը այդպես չպիտի անի:

Յերեխայի սննդին վերաբերող մի բան կս չպետք ե մոռանալ. մինչև անգամ այն յերեխային, վորը միայն մոր ծիծն ե ուտում, ժամանակ առ ժամանակ, որական մի 2-3 անգամ պետք ե միքանի գդալ

ջուր տալ: Հաճախ յերեխան խիստ անհանգստանում ե հենց իրեն տանջող ծարավի պատճառով:

Այդ տեսակետից, մանավանդ, ուշադիր պիտի լինել տարվա տաք յեղանակին, յերբ առհասարակ բոլոր կենդանիները ե թե բույսերը ջրի կարիք են դրում:

Յերբ յերեխան ստանում ե բացի մոր կաթից նաև ուրիշ կերակուր, նրա ջրի կարիքն ավելի մեծ ե լինում, ուստի այդ ել աչքի առաջ պիտի ունենալ:

Իհարկե, ամեն տեսակի ջուր յերեխային տալ չի կարելի. ջուրն անպայման պիտի լինի յեռացրած ե հետո սառցրած ու պետք ե պահել մաքուր ու խցանով (պրորկայով) փակվող շշի մեջ ե վոչ թե բաց բաժակում կամ այլ ամանում:

Յերեխայի կերակուրն ավելի նպատակահարմար ե պատրաստել ամեն անգամ նորը, այսինքն այնքան, ինչքան նա միանգամից պիտի ուտի. Իսկ յեթե կերակուրը պատրաստվում ե ավելի շատ, մի քանի անգամ կերակրելու համար, նրա ֆնացածը պետք ե պահել այնպես, վոր վոչ մի բանից չկեղտոտվի ե յերկրորդ անգամ կերակրելիս լավ տաքացնել ու ապա հետո տալ յերեխային:

Յեթե մայրը կատարի այստեղ ցույց տված խորհուրդները, նա իննսուն տոկոսով կապահովի իր մանուկի առողջութիւնը ե կյանքը:

ԿԱՆԱՅԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՎՈՉ ՎԵՆԵՐԱԿԱՆ).

Կանացի հիվանդութիւններ կոչվում են այն տկարութիւնները, վորոնցով միայն կանայք են հիվանդանում. հեշտոցի, արգանդի, ձվափողի ե ձվարանների հիվանդութիւններն են, այսինքն կնոջ սեռական ներքին գործարանների հիվանդութիւնները:

Այդ հիվանդութիւնների մեծ մասի պատճառը — վեներական ախտերն են, վորոնց մեջ առաջին տեղը պատկանում ե սուսանակին: Բայց այստեղ կիսովի այն հիվանդութիւններ ժասին, վորոնք առաջ են գալիս ուրիշ պատճառներից:

Կանացի հիվանդութիւններն առաջանում են գլխավորապես բորբոքումներից: Կնոջ սեռական ներքին գործարանների մեկն ու մեկի բորբոքվելիս հիվանդ գործարանն ուտում ե, լցվում ե արյունով, հիվանդ կիմն սկսում ե տաքացնել, գործարանից թարախ ե հոսում, յեթե նա ունի անցք դեպի դուրսը, որինակ՝ արգանդից կամ հեշտոցից. Իսկ յեթե դեպի դուրսը անցք չունի, որինակ՝ ձվարանը, հիվանդ գործարանի մեջ թարախակույտ ե հավաքվում, վորը կամ ծծվում ե յերկար ժամանակ տանջելուց հետո կամ ճանապարհ ե բացում դեպի դուրս կամ ներքին մի ուրիշ գործարան ե դուրս թափվում:

Շատ հաճախ սեռական ներքին մի վորեկ գործարանի բորբոքմա-

նը միանում է կնոջ սեռական մյուս գործարանների բորբոքումը ևս. այգալիսի դեպքում գործարանները կպչում են իրենց շրջապատող մասերի հետ. յեթե բորբոքումը յերկարում է և հիվանդությունը տեղական դառնում, այն ժամանակ սեռական ներքին գործարանները շորանում, փոքրանում, կուչ են գալիս և զրկվում գործելու ընդունակությունից:

Տևական բորբոքումները կնոջ հաշմանդամ են դարձնում բոլորովին: **Ի՞նչն է պատճառը:**

Հասարակության մեջ սխալ կարծիք և տարածվում, վոր կանացի (վոչ վեներական հիվանդություններն) առաջ են գալիս մրսելուց. դա սխալ է. պետք է ասել, վոր մրսելը միայն առիթ է, իսկ պատճառը մանրեններով վարակվելն է:

Շատ կանայք ամսական արյունհոսության ժամանակ անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում իրենց մաքրության վրա և կեղտոտում են արգանդը, վորից և բորբոքում է առաջ գալիս:

Յուրաքանչյուր կին սկսած արբուժքի որից մինչև ծերության հասակն ունենում է ամեն ամիս արյունհոսություն. արյունը գալիս է արգանդից և անցնելով հեշտոցից, թափվում է դուրս: Արգանդը միանում է հեշտոցին մի շատ նեղ անցքով, վորը միշտ փակ է լինում և բացվում է միմիայն արյունհոսության ժամանակ. յեթե հեշտոցում թարախ կա, կամ յեթե կինն իրեն մաքուր չի պահում, արյունհոսության ժամանակ հեշտոցից մանրենները շատ հեշտությամբ կարող են անցնել արգանդին և վարակել նրան:

Յերբեմն ծննդաբերությունից հետո ծննդկանի շրջապատողների (տատմոր) տգիտության շնորհիվ արգանդի մեջ արյուն է հավաքվում, կամ ընկերքի մի կտորը, նրա պատյանի մի աննշան մասնիկն է մնում արգանդի մեջ, և դա բավական է, վոր արգանդը բորբոքվի: Արգանդի մեջ մնացած ընկերքի կամ նրա պատյանի կտորները կամ հավաքված արյունը շատ շուտ հոտում են և վարակում արգանդը, իսկ այստեղից էլ վարակը շատ հեշտությամբ անցնում է ձվափողին և ձվաբանին. ահա և կանանց սեռական ներքին գործարանի հիվանդություն, կամ, կարճ ասած, կանանց հիվանդություն:

Շատ հղի կանայք յերեխայից աղատվելու համար դիմում են դանազան միջոցների կամ դիմում են տատմերների և դանազան տգետ կանանց ոգնության: Յերեխա վիժելու համար արգանդի մեջն են խոթում դանազան կեղտոտ իրեր, վորոնցով վարակում են արգանդն ու մյուս ներքին գործարանները և կանացի հիվանդություն առաջ բերում:

Յերբեմն էլ արգանդի մեջը ճխտած իրը մնասում է, պատում է արգանդը, վորովայնի բորբոքում առաջ բերում, վորը միշտ էլ մահով եվերջանում: Սեռական անկանոն հարաբերությունները, մանավանդ

ամսական արյունհոսության ժամանակ կատարված սեռական հարաբերությունը, նույնպես կարող են պատճառ դառնալ կանանց սեռական գործարանների տկարության: Ահա բոլոր այն պատճառները, վորոնցից կարող են առաջ գալ կանացի հիվանդությունները:

ԻՆՉՊԵՍ ԿՈՎԷԼ ԿԱՆԱՅԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ.

Վերը գրածից պարզ է, թե ինչպես պետք է կովել կանացի հիվանդությունների դեմ: Ամենից առաջ յուրաքանչյուր կին պետք է միշտ ել միտը պահի, թե ամսի վնր որն է ինքն ամսական արյունհոսություն ունենալու, այդ որվա համար նա պետք է առանձին շորեր ու կապեր ունենա. այդ շորերն ու կապերը պետք է միշտ ել մաքուր լինեն և կեղտոտվելիս պետք է փոխվեն:

Արյունը յերեւալու պես կինը պետք է կապի պատրաստված շորերը. ամեն կին պետք է զգուշ լինի, այդ որերը և սառը ջրով չլողանա, ծանր աշխատանք չանի, սեռական հարաբերություն չունենա, չպետք է լվանա սեռական գործարանները, մանավանդ պետք է աշխատի ձեռքերը մաքուր պահել, վորովհետև ամեն տեսակ տկարությունների պատճառը շատ անգամ կեղտոտ ձեռքերն են լինում: Այստեղ պետք է հիշել, վոր սեռական հարաբերություն չպետք է ունենալ ամսականից 2-3 որ առաջ և 3-4 որ հետո. յուրաքանչյուր կին միշտ ել պետք է հետաքրքրվի իր ամուսնու սեռական գործարանների առողջությամբ և հետու մնա հիվանդ տղամարդու հետ հարաբերություն ունենալուց, թեկուզ նա իր ամուսինը լինի:


Հղի կինը յերբեք չպետք է դիմե դանազան պատափների յերեխայից աղատվելու համար. պատափները տգետ են, մնասում են արգանդը և միշտ ել պատճառ են դառնում արգանդի բորբոքման և արյան վարակման, վորը միշտ ել մահով է վերջանում:

Փավառական կենտրոններում բուժարաններին կից կան հատուկ հանձնաժողովներ, վորոնք քննում են հղի կանանց, և յեթե կինն ունի հարգելի պատճառ, նրան տեղավորում են կանանց հիվանդանոց յերեխայի վիժումն անելու համար: Հիվանդանոցներում վիժումը կատարվում է կանոնավոր, գործադրվում են կատարյալ միջոցներ, վոր վիժումից հետո արգանդը չմնասվի, չվարակվի և տկարություն չստանա:

Բացի այդ, հղի կինը պետք է միշտ հակի իր առողջության վրա, կատարի հղիության վերաբերյալ կանոնները, վոր յերեխան չվիժվի հակառակ հղիացածի կամքի, և հիվանդություն առաջ չգա:

Ծննդաբերության ժամանակ յուրաքանչյուր ծննդկան, և մանավանդ նրա շրջապատողները, պետք է լուրջ վերաբերվեն ծննդաբերությանը և կատարեն ծննդաբերության վերաբերյալ բոլոր պատվերներն

1003
10301



ու կանոնները, վոր ծննդականը չտուժի և նանացի մի վորեկ հիվանդութիւն չստանա:

Ամենաչնչին անզգուշութիւնը, ամենափոքրիկ սխալը, կարող է մեծ ֆրասներ տալ և կորստաբեր հետեանքներ ունենալ:

ԱՆՉԱՓՍՀՍՍ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ ԱՄՈՒՍՆԱՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.

Մեր գյուղերում, յերբեմն և քաղաքներում, աղջիկներին շուտ են ամուսնացնում: Վաղաժամ ամուսնութեան պատճառը ծնողների տնտեսական դրութիւնն է: Աղջկա ծնողներն ստիպված են շուտ մարդու տալ, վոր ազատվին ուսող բերանից, իսկ տղայի ծնողները տան աշխատող ձեռքն ավելացնելու համար շուտ են անում, պսակում իրենց տղային:

Շատ տեղերում սովորութիւն կա ամուսնացնել աղջկան հենց վոր սկսվում է ամսական արյունհոսութիւնը: Ծնողների կարծիքով՝ ամսական արյունհոսութիւնը բավական ապացույց է իրենց դստեր հասունութեանը: Յուրաքանչյուր ծնող պետք է լավ իմանա, վոր ամսական արյունհոսութեան հասակը 15—17 տարին է, բայց լինում են դեպքեր, յերբ արյունհոսութիւնը 11—12 տարեկան հասակում է յերևում. բացի այդ, պետք է լավ իմանալ, վոր ամսական արյունհոսութիւնը բավական չէ ամուսնական կյանքի համար:

Աղջիկն իսկական հասունութեան է հասնում 18—20 տարեկան հասակում, իսկ շատ ժամանակ միքիչ էլ ուշ, միայն այդ հասակում են լավ զարգանում աղջկա վոսկրներն ու արգանդը, միայն այդ հասակի ամուսնացողը կարող է անվտանգ հղիանալ և ծնել: Միայն այդ հասակի կինը կարող է առողջ զավակներ ունենալ:

Ինարկէ, կարող են լինել այնպիսի աղջիկներ, վոր 16—18 տարեկան հասակում ունենան 20—22 տարեկանի կազմվածք և առողջութիւն, բայց դրանց մասին չէ մեր խոսքը. դրանք բացառութիւններ են և, բացի այդ, նրանց տեսքը խաբուսիկ է, վորովհետեւ, չնայած տեսքին, ներքին գործարանները դեռ լիովին չեն զարգացած: Պետք է հասկանալ, վոր սեռական գործունեութիւնը շատ մեծ ազդեցութիւն է իողնում կազմվածքի վրա, յեթե կազմվածքը կատարելապէս զարգացած չէ. սեռական գործունեութիւնը կարող է բոլորովին քայքայել ամուսնացող աղջկա առողջութիւնը, իսկ քայքայված առողջութիւնով հղի կինը յերբեք չի կարող ունենալ առողջ զավակ. անչափահաս աղջկա արգանդը լավ զարգացած չէ, ուստի և նրա մեջ չի կարող զարգանալ առողջ զավակ. իսկ լավ չզարգացած յերեխաները շուտ վիժվում են, կամ մեռած են ծնվում, կամ շատ շուտ մեռնում են ճնշելուց հետո, կամ էլ, յեթե կենդանի յեն ֆուում, թուլակազմ, շուտ հիվանդացող են լինում:

Անչափահաս ամուսնացած կինը հղիութեան ժամանակ շատ հաճախ ստանում է վոսկրների տկարութիւն, վորից հղի կինը հալ ու մաշ է լինում, և վորից շատ կանայք մեռնում են:

Անչափահաս հղի կնոջ ծծերը լավ չեն զարգանում հղիութեան պահին, իսկ յերեխայի ծնվելուց հետո յեղ լավ կաթ չեն տալիս, կամ կաթ են տալիս քիչ. անչափահաս ծննդկանի ծծերի ստուկները լավ չեն զարգացած, նորածինը չի կարողանում բռնել ծծի ստուկը:

Ահա թե վորքան փրասներ է տալիս անչափահաս աղջիկների ամուսնութիւնը: Կրկնում ենք. արբունքի հասնելը դեռ չի նշանակում, վոր աղջիկը հասունացել է ամուսնական կյանքի համար:

Յուրաքանչյուր ծնող պարտավոր է միշտ հիշել և կատարել հետեւյալը.— գյուղում 18 տարեկանից պակաս, իսկ քաղաքում 20 տարեկանից պակաս աղջկան ամուսնացնել չի կարելի, վորովհետեւ վաղաժամ ամուսնութիւնը աղջկա համար կորստաբեր հետեանքներ կարող է տալ:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ
ՎԱՐԱԿԻԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՆՐԱՆՑ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Կան հիվանդութիւններ, վորոնցով սովորաբար հիվանդանում են միայն յերեխաները. շատ քիչ յերեխա կլինի, վոր հիվանդացած չըլինի այս կամ այն մանկական հիվանդութեամբ:

Յերեխաների հիվանդութեան պատճառը ազգաբնակչութեան խիտ ապրելն և և ծնողների անմաքրասիրութիւնը:

Յերեխաների մեջ շատ տարածված են զանազան վարակիչ հիվանդութիւններ, վորոնք ամեն տարի ահագին զոհեր են տանում յերեխաներից, մանավանդ ծծկերներից, նրանց ծնողների տգիտութեան և անմաքրասիրութեան շնորհիւ: Վարակիչ հիվանդութիւնները գոյացում են շատ մանր և և հասարակ աչքով անեստացելի մարմնիկներէից, վորոնք կոչվում են մանրէներ, վորոնց տեսնելու համար գործ և անվում մի գործիք՝ մանրադիտակ անուշուով. այս գործիքը մեծացնում և մանրէները միքանի հարյուր անգամ, նույնիսկ 1000 և ևլ ավելի անգամ, և այդքան մեծացնելուց հետո մանրէները լինում են փոքրիկ կետի չափ. ահա թե վորքան մանր են նրանք. հենց այդ փոքրութեան համար ել կոչվում են մանրէ:

Մի բան պետք և լավ իմանալ, վոր յուրաքանչյուր վարակիչ հիվանդութիւն ունի իր մանրէն. յուրաքանչյուր մանրէ իրեն հատուկ հիվանդութիւն և տալիս:

Վարակիչ հիվանդութիւնը կոչվում և այն հիվանդութիւնը, վորն անցնում է հիվանդից առողջի. սա նշանակում և, վոր հիվանդի տկարութեան մանրէն անցնում և առողջին, և այս վերջինս ել տկարանում և նույն հիվանդութեամբ, ինչ վոր առաջինը:

Կան մանրէներ, վորոնք ողի միջոցով են անցնում առողջ մարդուն, կան, վոր ուտելիքի, խմիչքի միջոցով են անցնում առողջին և հիվանդացնում վերջինիս. կան մանրէներ ել, վորոնք հիվանդից առողջին անցնում են կպչելու միջոցով. որինակ՝ համրուրից, սեռական հարաբերութիւնից և այլն, կան և մանրէներ, վորոնք անցնում են հիվանդից առողջին զանազան միջատների միջոցով, որինակ՝ մալարիան, բծավոր տիֆը և այլն...

Այժմ անցնենք յերեխաների հիվանդութիւններին:

ԴԻՖՏԵՐԻՏ—ԲԿԱՅԱՎ.

Դիֆտերիտը կամ բկացավը մի շատ վտանգավոր և շատ շուտ ել վարակող հիվանդութունն է, վոր սկսվում է յերեխայի բկից: Ահա նրա նշանները.—

Մայրը նկատում է, վոր յերեխան տաքացնում է, գանգատվում է բկի ցավից. յերեխան չի կարողանում կերակուրը և թուքը ազատ կուլ տալ. ուտելիս և խմելիս, մանավանդ կոշտ բան ուտելիս, յերեխան գանգատվում է բկի ցավից: Չնայած վոր տաքութունը շատ ել բարձր է, բայց և այնպես յերեխան իրեն շատ վատ է զգում և ծանր հիվանդի տեսք ստանում:

Յեթե նայեք յերեխայի բկին բերանի միջի կողմից, կտեսնեք, վոր բուկը կարմրած է, նշագեղձերը մեկ կամ յերկու կողմից ել ուռած. յերբեմն նշագեղձերի ուռուցքն այնքան մեծ է լինում, վոր հիվանդ յերեխան դժվարանում է նույնիսկ շնչել: Ուռած նշագեղձերի վրա ամուր կպած սպիտակ փառ է լինում:

Յեթե այդ փառից մի շատ փոքրիկ կտոր վերցնենք և դնենք մանրադիտակի տակ, մենք կտեսնենք բկացավի մանրեն:

Յեթե հիվանդության առաջը չառնվի և թողնվի առանց բժշկության, հիվանդութունը կզարգանա, բկուռուցը նշագեղձերից կտարածվի կոկորդը և անպատճառ կխեղդի հիվանդին. և իրոք. շատ յերեխաներ այդպիսով զոհ են գնում բկացավին, մեռնում են իր ժամանակին բժշկին չդիմելու պատճառով:

Բացի բկի ուռելուց դիֆտերիտի մանրեններն արտադրում են թուլն, վորը, տարածվելով հիվանդ յերեխայի մարմնի մեջ, թուլնավորում է նրան:

Մանրենների թուլնավորումից թուլանում է հիվանդի վոտը կամ ձեռքը, թուլանում է փափուկ բրմքը. հիվանդն ինչ ուտում է, քթածակերով դուրս է թափվում:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՎԱՐԱԿԻՐ.

Բկացավի մանրենները կարող են անցնել հիվանդից առողջին գանազան ճանապարհներով. այսպես, որինակ, կարող է հիվանդատերերից մեկն ու մեկը փոխադրել մանրեն իր հիվանդից մի ուրիշ առողջ յերեխայի, կամ առողջ յերեխան գնում է այն տունը, վորտեղ կա կամ յեղև է բկացավով հիվանդ: Մեզանում մի շատ վատ սովորութուն կա. դա հիվանդներին այցելելն է. յերբ մեկի տանը հիվանդ է լինում, հիվանդի հարևանները կամ ազգականներն իրենց պարտքն են համարում

շուտ շուտ այցելության գնալ, առանց դիտակցելու, վոր հիվանդը կարող է վարակիչ լինել և վարակել իրենց կամ իրենց յերեխաներին:

Յուրաքանչյուր մարդ պետք է լավ իմանա, 1) վոր հիվանդի մոտ վորքան քիչ մարդ գնա, այնքան լավ է հիվանդի համար. 2) վոր հիվանդը կարող է տկար լինել վարակիչ հիվանդությամբ և կարող է վարակել այցելողին կամ այցելողի միջոցով նրա տնեցիներին:

Առհասարակ հիվանդի մոտ պետք է մշտական մնա միայն նրա խնամողը. մնացածները մնալն ավելորդ է:

Վարակիչ հիվանդի մեկուսացումով միայն կարելի յէ հիվանդության տարածման առաջն առնել: Հակառակ դեպքում հիվանդութունը շատ շուտ կարող է տարածվել ամբողջ գյուղում և քաղաքում և համաճարակային բնույթ ստանալ:

Այն ժամանակ նրա դեմ կովելը շատ դժվար է լինում:

«ԲՈՒԿ ԾՆՏՈՂՆԵՐԸ».

Մի ուրիշ վատ սովորութունն ևս կա մեզանում. յերբ յերեխայի բուկը ցավում է, փոխանակ բժշկին հրավիրելու, դիմում են հարևանուհիներից մեկին, «բուկ ճխտող կնոջ», վորը գալիս է հիվանդի մոտ և առանց նայելու հիվանդ յերեխայի բկին, առանց հասկանալու, թե ինչ բկացավ է, առանց ձեռքերը լվանալու, մատը տանում է հիվանդ յերեխայի բերանը և հուպ է տալիս նշագեղձերը, «բուկը ճխտում է» . այդ գործողութունը կատարելուց հետո «բուկ ճխտող» կինը գնում է մի ուրիշ մոտ «բուկ ճխտելու», առանց նախորդ ձեռքերը լվանալու:

Բկացավի տարածման մի միջոցն էլ հենց այդ «բուկ ճխտելն» է. դիֆտերիտով հիվանդի բուկը ճխտելուց հետո կինը դիֆտերիտի մանրեններով կեղտոտված մատով ճխտում է և մի ուրիշ յերեխայի բուկ, վորի բկացավը կարող է դիֆտերիտ չլինել: Ինչ ասել կուզի, վոր յերկրորդ յերեխան ևս վարակվելով հիվանդանում է:

Ուստի յերբեք չպետք է դիմել «բուկ ճխտողներին». պետք է լավ իմանալ, վոր բկացավերը միքանի տեսակ են. կա հասարակ բկացավ, կա թարախային բկացավ, կա և դիֆտերիտային բկացավ: Իհարկե, միայն բժիշկը կարող է ջոկել, թե զրանցից վորն է վարակիչը և վորը հասարակը:

ԻՆՉՊԵՍ ԲԾԵԿԵԼ ԿԻՎԱՆԳ յԵՐԵՒԱՅԻՆ:

Յուրաքանչյուր մայր պարտավոր է յերեխայի բուկը ցավելուն պես դիմել բժշկին. դիֆտերիտի ժամանակ վորքան շուտ դիմես բժշկին, այնքան լավ, վորովհետև վորքան քիչ ժամանակ է անցնում հիվանդության սկզբից, այնքան ել շուտ կարելի յէ բժշկել հիվանդութունը: Իսկ յերբ հայտնի յէ, վոր գյուղում կամ քաղաքում կա բկացավ համա-

ճարակային տեսակի, այդ դեպքում ամենահասարակ բնական ղեկավարում անգամ պիտի դիմել բժշկին, պարզել, թե ինչ հիվանդութիւնն է, և վաղորոք միջոցներ ձեռք առնել հիվանդին բժշկելու, ուրիշներին վարակելուց ազատելու համար:

ՀԱԿԱԴԻՖՏԵՐԻՍՍՍՅԻՆ ՇԻՃՈՒԿԸ.

Արանից 20—25 տարի առաջ շատ դժվար եր դիֆտերիտի դեմ կռիւնքը, բայց հետո գտնվեց դիֆտերիտի դեմ հատուկ դեղ, վորը շատ հեշտացրեց նրա դեմ կռիւնքը:

Առհասարակ այժմ աշխատում են հնարել հատուկ դեղեր ամեն մի վարակիչ հիվանդութիւնի դեմ. այդ տեսակի դեղ դիֆտերիտի դեմ արդեն կա, վոր կոչվում է **հակագիֆտերիսայից շիճուկ**:

Այդ դեղը սրսկում են հիվանդին, և 24 ժամից հետո հիվանդի դրութիւնն այնքան և լավանում, վոր կարծես թե նա հիվանդ չի յեղել. շրջապատողները մինչև անգամ չեն և ճավատում, վոր իրենց յերեսան հիվանդ և յեղել դիֆտերիտով: Բայց սրսկումը պետք է կատարել վաղ, հենց հիվանդութիւն սկզբին, հակառակ դեպքում դեղը կարող է չօգնել. ապա ուրեմն դիֆտերիտի դեպքում վորքան շուտ դիմի մայրը բժշկին, այնքան լավ հիվանդի համար:

Բայց դա բավական չէ. այդ դեղից յիթե մի փոքր սրսկենք հիվանդի հետ միևնույն սենյակում ապրող առողջ յերեսաներին, նրանք ել չեն հիվանդանա դիֆտերիտով, այնպես վոր այդ հակագիֆտերիտային շիճուկը, բացի բժշկելուց, ազատում է և առողջին հիվանդանալուց:

Այդ նպատակի համար վերջերս պատրաստել են ավելի լավ ճարգեղ:

Այդ ճարից սրսկելով առողջներին, մենք խանգարում ենք հիվանդութիւն տարածվելուն, հիվանդութիւն առաջն առնում ենք, վորովհետև սրսկելուց հետո հիվանդն առողջանում է, իսկ առողջներն ել չեն հիվանդանում, և հիվանդութիւնն այդ տան մեջ դադարում է:

Ուրեմն. —

- 1) Յերեսայի բուկը ցավելիս պետք է դիմել բժշկին.
 - 2) Պետք է առանձնացնել հիվանդին, հարևաններին արգելել հիվանդին այցելել և ուրիշներին տուն չգնալ.
 - 3) Յերքեք հիվանդի բուկը ճխտել չտալ.
 - 4) Ընտանիքում հիվանդ լինելու դեպքում հարկավոր է դիմել բժշկին, սրսկել հակագիֆտերիտային ճարից վոչ թե միայն հիվանդին, այլ և առողջ յերեսաներին:
- Յեթե բոլորն ել հետևեն այս խորհուրդներին, բնական վտանգավոր չի լինի, շուտ կվերջանա և համաճարակային բնույթ չի ստանա:

ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁ.

Կապույտ հազը նույնպես վտանգավոր հիվանդութիւնն է յերեսաների, մանավանդ ծծկերներին համար: Կապույտ հազն ել վարակիչ է և ունի իր մանրէն, բայց մինչև այժմ այդ մանրէն դեռ չի գտնված:

Կապույտ հազը բուրբիւն ել լավ հայտնի չէ. հիվանդ յերեսան հազում է, և հազը շարունակվում է շարաթնեքով, հիվանդը հազալիս կապում է և նրա կապտելու պատճառով ել հիվանդութիւնը կոչվում է «կապույտ հազ»: Հիվանդի կապտելու պատճառն այն է, վոր հազի ժամանակ հիվանդի կրծքի և պարանոցի մկանները կծկվում են, սեղմում են արյան յերակները, արյունը կանգ է առնում, հիվանդը կապույտ գույն ստանում. յերքեմն արյունը այնքան խիստ է կանգ առնում, վոր յերակները, մանավանդ քթի մեջ գտնվող յերակները պատուվում են, և արյունը հոսում է:

Այս հիվանդութիւն վտանգավորութիւնը նրանումն է, վոր հիվանդը շարաթնեքով տանջվում է հազից, բայց ամենազլխավորն այն է, վոր կապույտ հազով հիվանդը շատ շուտ ստանում է թոքերի բորբոքում, վորը կարող է գերեզման տանել հիվանդին: Մինչև այժմ չի գտնված մի հատուկ դեղ այդ հիվանդութիւնի դեմ:

Կապույտ հազի դեպքում նույնպես պիտի առանձնացնել հիվանդին, վոր ուրիշները չհիվանդանան:

Հիվանդին պահել բաց ոդում, մանավանդ գարնանը և ամառը:

Մաքուր ոդը և արևի ճառագայթները մեծապես ոգնում են հիվանդին:

Չլողացնել հիվանդին, մանավանդ ձմեռը, վոր թոքերի բորբոքում չստանա:

Դիմել բժշկին հազի դեմ դեղեր նշանակելու համար, վոր հիվանդը շատ չտանջվի:

Կապույտ հազը մահվան դեպքեր քիչ է տալիս, բայց յերք անդգուշ են լինում և անգիտակից վերաբերվում, հիվանդութիւնը ծանրանում է և հաճախ մահաբեր դառնում. բացի այդ, հիվանդութիւնը համաճարակային բնույթ է ստանում:

Ք Ո Ւ Թ Ե Շ.

Քուլթեշն ել յերեսաների վարակիչ հիվանդութիւնն է. յերքեմն մեկ կամ յերկու դեպք է լինում գլուղում կամ քաղաքում, բայց յերքեմն համաճարակ է դառնում, մանավանդ աշնանը և ձմեռը:

Քուլթեշն սկսվում է հանկարծ. առողջ յերեսան սկսում է փսխել ու տաքացնել. հետևյալ ոդը գանգատվում է բկի ցավից. միքանի ոք

տաքացնելուց հետո հայտնվում են քութեշի նշանները. հիվանդ յերեխայի մարմինը ծածկվում է կարմիր պուտերով, կարծես կարմիր հատիկ են ցանել կաշվի վրա: Շատ շուտ կարմիր պուտերը բռնում են հիվանդ յերեխայի կաշին, միայն ազատ են մնում շրթունքներն ու կզակը:

Հիվանդի լեզուն խիստ կարմիր գույն է ստանում. նշագեղձերը նույնպես կարմիր են և ուռած, բայց փառ չկա վրան:

Մինչև այժմ նրա մանրեն ևս չի գտնված. քութեշը փաստում է հիվանդի վոչ միայն բերանն ու կաշին, այլ և ականջը, յերիկամունքները, սիրտը և այլ նշանավոր գործարանները. փաստված գործարանները բորբոքվում են և թարախ տալիս. ականջի թարախային բորբոքումը յերբեմն այնքան ծանր տեսակի յե լինում, վոր հիվանդը զրկվում է լսողությունից: Խլանում է, իսկ յեթե յերեխան հիվանդացել է և քառացել խոսել սկսելուց առաջ, այն ժամանակ նա ընդմիջտ համըր է մնում, վորովհետև յերեխան խոսել սովորում է լսողությամբ. իսկ այն յերեխան, վոր մինչև խոսել սկսելը զրկվում է լսողությունից քութեշի կամ մի վորևե այլ հիվանդության պատճառով, նա ընդմիջտ համըր կմնա, լալ կմնա, ել յերբեք խոսել չի կարողանա:

Յեթե քութեշը փաստում է սիրտը, հիվանդի սիրտը տկարանում է և կանոնավոր չի գործում, իսկ սրտի տկարությունն անբուժելի յե: Քութեշը կարող է առաջ բերել նաև յերիկամունքների ծանր հիվանդություն, վորի հետևանքը հիվանդն զգում է իր ամբողջ կյանքում: Թեև քութեշի մանրեն չի գտնված, բայց և այնպես հայտնի յե, վոր հիվանդության վարակը գտնվում է հիվանդի արյան մեջ, նրա թոքի, թարախի մեջ. հիվանդի կաշվի թեփի մեջ ել կա քութեշի վարակը: Այա ուրեմն պետք է զգուշ լինել քութեշով հիվանդի արյունից, թուքից, թարախից և կաշվի թեփից:

Քանի չի առողջացել քութեշով հիվանդը, նա միշտ ել կարող է վարակել ուրիշներին:

Հիվանդությունը 3 շաբաթ է տևում, վորից հետո հիվանդի կաշին սկսում է թեփ տալ. կաշվի թեփոտումն ել մոտ 3 շաբաթ է տևում, այնպես վոր քութեշով հիվանդը վսանգավոր է վարակելու տեսակից 6—7 շաբաթ:

Յուրաքանչյուր մայր պարտավոր է քութեշի դեպքում առողջ յերեխաներին հեռացնել տնից, հիվանդ յերեխային բուրդովին առանձնացնել և դիմել բժշկին, վորը խրատներ և դեղեր կտա հիվանդին խնամելու և բժշկելու համար:

Քութեշը շատ լուրջ հիվանդություն է և պահանջում է լուրջ վերաբերմունք և խնամք:

ԿԱՐՄՐՈՒԿ.

Չկա համարյա մի մարդ, վորը կարմրուկով հիվանդացած չլինի յերեխա հասակում: Այդ պատճառով ել ժողովրդի մեջ տարածված է այն կարծիքը, վոր կարմրուկով բոլոր յերեխաներն ել պետք է հիվանդանան:

Կարմրուկի մանրեն նույնպես չի գտնված, բայց հայտնի յե, վոր հիվանդությունը վարակիչ է և վոր նա շատ հեշտ ու արագ անցնում է հիվանդից առողջին ողի, ուրիշ մեկ առողջի և դանազան իրերի միջոցով: Կարմրուկը շուտ կպչան է, դրա համար ել կարծում են, վոր ամեն յերեխա պետք է հիվանդանա կարմրուկով: Այդ կարծիքն սխալ է: Կարմրուկը շատ տարածված է, շատ շուտ համաճարակի ձև է ընդունում, բայց և այնպես պետք է լավ իմանալ, վոր նա հասարակ հիվանդություն չէ, նա նույնպես վտանգավոր է, գուցե և ամենավտանգավորը յերեխաների վարակիչ հիվանդություններից:

Կարմրուկն սկսվում է շատ թեթև, բայց դադարագուրի կերպով հարվածում է հիվանդի նշանավոր գործարանները և յերբեմն մահվան պատճառ դառնում, մանավանդ ծծկերների համար:

Կարմրուկով կարող են հիվանդանալ և հասակավորները:

Կարմրուկի նշանները հետևյալներն են: Կարմրուկն սկսվում է հանկարծ: Յերեխան ուրախ-զվարթ վազվզում եր. հանկարծ նա տկարանում է. դանդաղում է հարբուխից ու հաղից, աչքերը լցվում են արյունով, կարմրում են, գլուխը ցավում է, հիվանդը տաքացնում է, լեզուն ծածկված է սպիտակ փառով: Արևի լույսն անհանգստացնում է աչքերը, գնալով հիվանդի հազը սաստկանում է: Յերկու որից հետո հիվանդի վրա հայտնվում են մանր և կարմիր բծեր, առաջին որը յերեսի վրա, հետևյալ որը՝ կրծքի և թևերի ու հետո՝ փորի և վոտների վրա: Բծերը յերևալուց հետո տաքությունն ավելի բարձրանում է: Միքանի որից հետո բծերն անհետանում են, և հիվանդի կաշին սկսում է թեփոտել:

Հիվանդությունը տևում է 2—3 շաբաթ:

Կարմրուկի վտանգավորությունը հետևյալումն է. հիվանդի հազը յերկարում է, հիվանդը հալումառ է լինում: Կամ կարմրուկը չվերջացած թոքերի բորբոքում է առաջ դալիս, կամ ականջներն են բորբոքվում. յերիկամունքները ևս կարող են բորբոքվել: Յերիկամունքների և թոքերի բորբոքումը հաճախ վերջանում է հիվանդի մահով:

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունները, կարմրուկն ել է պահանջում առանձնացնել հիվանդին:

Ինչպես լուրջ հիվանդություն, կարմրուկն ել է պահանջում դիմել բժշկին, վորովհետև վոչ վոր չգիտե՝ ինչից և յերբ կարող է նույնիսկ ամենաթեթև կարմրուկը փոխվել ծանր տեսակի, կարող է բարդանալ

հիվանդի զանազան գործարանների բորբոքումով և հիվանդի մահվան պատճառ դառնալ:

Կան ծնողներ, վորոնք առողջ յերեխաներին դիտմամբ պառկեցնում են կարմրուկով հիվանդի մոտ, վորպեսզի վարակվեն, և հիվանդութունը տնից շուտ հեռանա:

Բայց դա սխալ է:

Վոչ մի ծնող, վոչ մի բժիշկ մինչև անգամ չի կարող նախորոք գիտենալ, թե վոր յերեխայի կարմրուկը կարող է թեթև անցնել և վորինը ծանր:

Պատահում է այսպիսի դեպք. յերեխաներից մեկը հիվանդ է թեթև տեսակի կարմրուկով, բայց վարակելիս ուրիշին կարող է տալ ծանր տեսակի կարմրուկ:

Վերջապես անհրաժեշտ բան չէ, վոր բոլորն ել հիվանդանան կարմրուկով:

Կարելի չէ և ամենին չհիվանդանալ, պետք է և աշխատել, վոր վոչվոր չհիվանդանա, մանավանդ ծծկերները և փոքր յերեխաները: Վորքան մեծ է յերեխան, այնքան հեշտությամբ է տանում նա կարմրուկը:

Պարզ է, ուրեմն, վոր հիվանդին պետք է առանձնացնել և առողջին հեռու պահել հիվանդից:

ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Բոլորին ել հայտնի չէ, վորքան տարածված են յերեխաների մեջ մարսողական գործարանների հիվանդութունները, մանավանդ ամառը: Այդ հիվանդութունների մեջ կան վարակիչներ և վոչ վարակիչներ. պետք է լավ իմանալ, վոր մարսողականների թե՛ վարակիչ և թե՛ վոչ վարակիչ հիվանդութունները բոլորն ել վտանգավոր են յերեխաների համար, մանավանդ ծծկեր յերեխաների համար:

Մարսողական գործարանների հիվանդութուններն առավելապես տարածված են անգիտակից, անմաքրասեր ազգաբնակչության մեջ. այդ հիվանդութունները շատ զոհեր են տանում հիվանդ յերեխաներից. և վորքան տղետ է ժողովուրդը, այնքան և շատ են մեռնում յերեխաները:

Կրթված, լուսավոր և գիտակից ժողովրդի մեջ մարսողական գործարանների խանգարումներից մեռնում են շատ քիչ յերեխաներ. 100 յերեխաներից մեռնում են 5—7. հիվանդ 100 յերեխաներից տաս հոգու մահը շատ է համարվում լուսավորված ժողովրդի համար. մեղանում հիվանդ հարյուր յերեխաներից 25—27-ը մեռնում են այդ հիվանդութուններից. դա շատ մեծ թիվ է, և արժե մտածել ու միջոցներ գտնել այդ մեծ մահացության դեմ:

Մարսողական գործարանների հիվանդութուններն սկսվում են հանկարծ. այս հիվանդութուններին յենթակա չեն ամեն հասակի յերեխաներ, մանավանդ ծծկերները: Առողջ յերեխան առանց տաքացնելու սկսում է փոխել. ինչ ուտում է, իսկույն ևեթ թափում է: Փսխումները յերեմն այնքան շուտ-շուտ են կրկնվում, վոր բոլորովին ուժասպառ են անում հիվանդին: Յերեխան հալումաշ է լինում ու մեռնում մի 2 որից հետո: Հաճախ փսխումի հետ միասին և լուծ է լինում. կան դեպքեր, յերբ փսխումը դադարում է, բայց լուծը շարունակվում է և դերեզման գլորում հիվանդ յերեխային:

Շատ անգամ լուծի հետ և արյուն է գալիս աղիքներից. արյունը լինում է նքոցով կամ առանց նքոցի: Արյան յերևալը վատ նշան է. արյունը ցույց է տալիս, վոր հիվանդ յերեխայի աղիքների մեջ խոց է հայտնվել, վոր աղիքի յերակը խոցից վնասվել է ու պատռվել:

Պետք է լավ իմանալ, վոր մարսողական գործարանները մարդու համար ամենակարևոր գործարաններից մեկն են, մանավանդ ծծկեր յերեխաների համար. վորովհետև աճումը, մեծանալը այդ գործարանների միջոցով է կատարվում, ուստի անհրաժեշտ է խնամք տանել և հոգալ նրանց կանոնավոր գործունեություն մասին:

Յուրաքանչյուր մայր պետք է լավ իմանա, վոր իր յերեխայի մարսողականների հիվանդության պատճառը յերեխայի ուտելիքն ու խմելիքն է. պետք է լավ իմանալ, վոր մեծ մասամբ մայրերն են հանցավոր, վոր յերեխաները տկարանում են մարսողական գործարանների հիվանդությամբ: Պետք է հսկել, վոր յերեխան ամեն տեսակ բան չուտի և չխմի. մինչև մեկ տարեկան հասակը յերեխային պետք է կերակրի մայրը իր կաթով կամ ծծմայրը: Ամեն մի մայր պետք է հսկի, վոր մի ուրիշը ավելորդ ու վնասակար ուտելիք չտա յերեխային, վորն անգիտակցարար կարող է ուտել և հիվանդանալ:

Քանի՛-քանի՛ յերեխաներ իրենց ծնողների տգիտությունից և անզգուշությունից զոհ են գնացել:

Բայց ամենավտանգավորն արյունլուծի մի ուրիշ տեսակն է, վորը վարակիչ է և վորը քաճ է կոչվում (գիդնտերիա, կանիճ), թանչն ունի իր մանրենները և վարակում է յերեխաներին կաթի, ջրի և ուտելիքի միջոցով:

Սովորական լուծի ժամանակ ել կարող է արյուն յերևալ, բայց թանչը արյունլուծի ծանր տեսակն է:

Թանչով հիվանդ յերեխան տաքացնում է. հիվանդի փորը ցավում է. լուծը պատահում է որական 15-20 անգամ. հիվանդութունը տևում է միքանի որից մինչև միքանի շաբաթ և հաճախ վերջանում է հիվանդի մահով:

Ուրեմն չպետք է մոռանալ հետևյալը. լավ պահած, լավ խնամած

յերեխայի մարտողական գործարանները յերբեք չեն հիվանդանում: Ծառ մայրեր վերագրում են այդ հիվանդութիւնները յերեխայի մրսելուն, ատամ հանելուն, ամուսն շողին և այլն... բայց դա սխալ է:

Պատճառն ուրիշ տեղ պետք է վորոնել:

Յերեխայի մոր անզգուշութիւնը, մոր անգիտակցութիւնն է պատճառը. յերեխային լավ չխնամելն է պատճառը: Այն մայրը, վորը չգիտե յերեխային խնամելու յեղանակը, վորը չգիտե ինչպես պետք է խնամել յերեխային, հանցավոր է իր յերեխայի մարտողական գործարանների հիվանդութեան համար:

ՃԻՃՈՒՆՆԵՐ.

Ի՞նչու էլ տեսած կլինեն ճիճուներին, վորոնք կեղտոտութեան հետ դուրս են գալիս աղիքից:

Յերեխաներն էլ են ունենում ճիճուներ և ավելի հաճախ, քան մեծերը: Առողջ յերեխան ուտելիքի և խմելիքի հետ կուլ է տալիս ճիճվի ձվիկը, վորը հետո անցնում է աղիքի մեջ, այնտեղ դառնում է ճիճու:

Ճիճուները շատ տեսակի յեն լինում. կան տափակ ճիճուներ և կլոր ճիճուներ: Յուրաքանչյուր տեսակ ճիճուն իր ձուն ունի. վոր տեսակի ճիճվի ձուն մարդ կուլ է տալիս, այն տեսակի ճիճու յել գոյանում և աղիքի մեջ: Յերեխաները մեծ մասամբ կլոր ճիճուներ են ունենում. կլոր ճիճուներն էլ միքանի տեսակ են. բայց մենք կպատմենք միայն յերկուսի մասին:

Մեկ տեսակ կլոր ճիճուն շատ փոքր է և ասեղի նման բարակ և ունի սպիտակ գույն. այդ ճիճուն գլխավորապես լինում է աղիքի վերջին, սրբանի մեջ, հետույքի անցքի մոտ:

Մանր ճիճուներից շատ սաստիկ քոր է գալիս հետույքի անցքը. յերբեմն քորն այնքան սաստիկ է լինում, վոր յերեխան չի կարողանում քնել: Հետույքի անցքի մոտ ճիճվի եզը ձու յե ածում, յերեխան քորում է անցքը ու, մատերը բերանը դնելով, կուլ տալիս քորելուց հետո մատերին կպած ճիճվի ձվերը, վորոնք աղիքների մեջ նորից դառնում են ճիճու. և այսպես անվերջ, մինչև վոր յերեխայի մայրը հասկանում է յերեխայի անհանգստութեան պատճառը և դիմում բժշկի ոգնութեանը: Մյուս տեսակի կլոր ճիճուն շատ նման է թաց գետնի կամ աւվի մեջ գտնվող վորդերին:

Այս տեսակ ճիճուն սպիտակ կամ կարմիր է լինում. յերկարութիւնը 2-6 վերջոկ է, պոչը սրածայր, իսկ գլուխը՝ կլոր:

Այս կլոր ճիճուն լատիներեն «ասկարիդա» յե կոչվում և ամենավտանգավորն է մեկ մոտ տարածված բոլոր տեսակի կլոր ճիճուներից:

Ասկարիդան դուրս է գալիս աղիքից կեղտոտութեան հետ, կամ աղիքից անցնում է ստամոքսը և դուրս է գալիս բերանից փսխելուց

հետո: Պատահում են դեպքեր, յերբ ասկարիդան դուրս է գալիս աղիքի միջից և անցնում ուրիշ գործարաններ, վորոնց մեջ ճիճուն բորբոքում է առաջ բերում ու վտանգի յենթարկում մարդու կյանքը: Ասկարիդան աղիքների միջից կարող է անցնել լյարդը կամ թոքերը. վորտեղ էլ վոր մտնի, ճիճուն բորբոքում կառաջացնի:

Ասկարիդան այդ անել կարող է շնորհիվ նրան, վոր նա ունի բերանի մեջ առանձին գործիք, վորով նա ծակում է աղիքն ու անցնում վորովայնի մեջ և այստեղից մտնում մի ուրիշ գործարան. այս դեպքում հիվանդի աղիքից արյունհոսութիւն կարող է լինել:

Ասածներից պարզ է, թե այդ ճիճուն վորքան վտանգավոր է, ուտտի ճիճվի յերեւալուն պես յերեխայի մայրը պիտի հոգ տանի և դիմի բժշկին ճիճվահան դեղ ստանալու համար: Պետք է լավ հիշել, վոր հարկավոր է նախորոք միջոցներ գործ դնել ճիճվի դեմ և չսպասել բարգուժիւնների հայտնվելուն, վորովհետև դրանից հետո արդեն դժվար կլինի ոգնելը:

ՏԱՓԱԿ ԾԻՃՈՒՆՆԵՐԸ.

Տափակ ճիճուներն էլ միքանի տեսակ են. նրանք շատ յերկար են լինում և կտոր-կտոր թափվում են դուրս հետույքի անցքից: Այս ճիճուն ունի իր ձուն, վորը կուլ է տալիս մարդ ուտելիքի և խմելիքի միջոցով:

Ճիճուների ձվերով վարակվում են մարդիկ հում ջուր, հում կանաչեղեն, հում միս գործածելուց: Ճիճուների դեմ կռիւնու ամենալավ միջոցն է՝ գործ չածել հում ուտելիք և խմելիք: Աղբյուրի ջուրը, յեթե ծորանից է վերցվում, կարելի յե հում խմել, իսկ յեթե ուրիշ ամանով և բերվում, և բաց է պահվում ջրամանը, պետք է յեռացնել ու հետո գործածել այդ ջուրը:

Աւվի ջրով չլվացվել և բերանը չմաքրել:

Կանաչեղենը պետք է լավ վանալ աղբյուրի ջրով. փոքր յերեխաներին չկերակրել հում կանաչեղենով. պետք է հսկել, վոր փոքր յերեխաներն առանց վանալու հում միրգ, հում կանաչեղեն չուտեն և աւվի ջուր չխմեն:

Պետք է հսկել, վոր յերեխաները հող չուտեն, վորովհետև հողի մեջ պատահում են ամեն տեսակ ճիճուների ձվիկներ:

Յերբեմն ծծկեր յերեխաներն են ունենում ճիճուներ. յերեխայի մայրը դարմանքով հարց է տալիս բժշկին՝ «ինչպես է ճիճու գոյացել, քանի վոր մոր կաթից բացի յերեխան ուրիշ վորչինչ չի ուտում»: Իհարկե, բացատրութիւնը պարզ է. յերեխային դնում են հատակի վրա պարտեղում. յերեխան դեռնին չոչ է անում ու հետո մատները, հողով կեղտոտած, դնում բերանը, ծծում. մայրն այդ բոլորը չի նկատում ու

չի յիլ հասկանում, վոր հողի հետ յերեխան կուլ ե տվել և մատներին կպած ճիճվի ձվերը: Իսկ ճիճու յերեալուն պես յուրաքանչյուր մայր պարտավոր ե դիմել բժշկին ճիճվահան դեղ տալու համար, վոր ճիճուներն աղիքների մեջ սատկին և կեղտոտության հետ դուրս գան:

Այս բոլորից պարզ ե, թե վորքան մեծ պարտականութուն կա յերեխայի մոր վրա, թե վորքան շատ բան ե պետք իմանալ յերեխային կանոնավոր խնամելու ու մեծացնելու համար: Յուրաքանչյուր հիվանդութուն ունի իր պատճառը և ունի իր հատուկ միջոցը, միայն պետք ե գիտակցել և ժամանակին հոգ տանել, վոր հետո դժբախտութուն չպատահի:

ՎՈՍԿՐԱՍՏ ԿԱՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ.

Շատ քչերը գիտեն՝ ինչ բան ե վոսկրախտը, վորի ուրիշ անունն ե **անգլիական հիվանդութուն** կամ **րախիս**: Շատերը տեսած կլինեն ծուռ վոտանի ու մեծ գլխանի յերեխաների, վորոնք իրենց թույլ կազմվածքով և մեծ փորով գրավում են բոլորի ուշադրութունը:

Ու հենց դրանք են վոսկրախտավորները, անգլիական ախտով հիվանդները. անգլիական ախտով հիվանդ յերեխաները ուշ են վոտի կանգնում, ուշ են սկսում ման գալ, կերածը չեն մարսում, լուծ կամ փորկապութուն են ունենում:

Դեռ յերեք ամսական հասակից յերևում ե, վոր յերեխան առողջ չե. յերեխան չի զորանում, գլուխը քրտնում ե, շատ լալիս ե, ծոճրակի մազերը թափվում են, գլխի վոսկրները փափկում:

Այս հիվանդությամբ յերեխան շատ շուտ մեռնում ե մի վորևե այլ հիվանդությունից, իսկ յիթե կենդանի յե մնում, միշտ ել հիվանդոտ ու թույլ ե լինում. հեռվից կարելի յե ճանաչել նրան՝ գլուխն ու փորը մեծ, վոտները ծուռ:

Պատճառն ի՞նչ ե:

Մարդու վոսկրների մեջ կա կիր և այլ դանազան աղբը. մարդ ստանում ե իրեն կազմվածքի համար դանազան հարկավոր նյութեր ուտելիքից և խմելիքից մարսողական գործարանների միջոցով:

Վոսկրախտի պատճառի մասին տարբեր կարծիքներ կան. բայց վերջին ժամանակներս ավելի ու ավելի ընդհանրանում ե այն կարծիքը, վոր վոսկրախտի պատճառը յերեխայի սննդի խանգարումն ե:

Փորձերը ցույց են տվել, վոր սննդանյութերի մեջ, սննդաբուխի համար կարևոր նյութերից բացի, կան և մի այլ տեսակ նյութեր, վորոնց բացակայութունը խանգարում ե սննդի կանոնավոր ստանալը և առաջ ե բերում գանազան հիվանդություններ, ի թիվս վորոց և վոսկրախտ:

Այդ նյութերը կոչվում են վիտամիններ. վիտա—լատիներեն կնշանակե կյանք. վիտամիններ—կենսատու նյութեր:

Յուրաքանչյուր սննդանյութ պարունակում ե իրեն հատուկ վիտամինը: Վոսկրախտի վիտամինը գտնվում ե կնոջ կաթի և ձկան յուղի մեջ: Այդ ե պատճառը, վոր վոսկրախտով առավելագույն հիվանդանում են այն ծծկեր յերեխաները, վորոնք սնվում են վոջ թե իրենց մոր կամ ծծմոր կաթով, այլ կովի կաթով կամ գանազան ալյուրներից պատրաստած կերակուրներով:

Վոսկրախտը յերկու տեսակ ե լինում՝ թեթև և ծանր:

Առաջին տեսակի նշանները թեթև են լինում:

Յերեխան լավ չի աճում, ատամները ուշ են դուրս գալիս, ունենում ե լուծ, յերբեմն և փորկապութուն, վոսկրները չեն զորանում, կակուղ են լինում, հեշտությամբ ծավում ու կոտրվում են. հիվանդն ուշ ե վոտի կանգնում և ուշ ե սկսում ման գալ:

Յերե յերեխան կենդանի յե մնում և հասնում ե 3 տարեկան հասակին, հիվանդությունը դադարում ե, միայն գլխի մեծությունից և վոտների ծուռությունից կարելի յե իմանալ, վոր նա առաջ հիվանդ ե յեղել վոսկրախտով:

Ծանր տեսակի նշաններն ուժեղ են. ձեռքերի ու վոտների վոսկրները, մանավանդ սրունքի վոսկրները այնպես են ծավում, վոր կարծես աղեղ լինեն. յերբեմն վոտի թաթը դեպի ներս ե ծավում, և յերեխան զրկվում ե ուղիղ մանգալու հնարավորությունից. հիվանդ յերեխան հաշմանդամ ե դառնում: Յերբեմն հիվանդությունը վոդնաշարի վրա յե ազդում, վոդնաշարը ծավում ե: Վոսկրների այդ փոփոխությունները յերբեմն մնում են հիվանդի վրա մինչև մահը:

Ծանր տեսակի վոսկրախտով հիվանդ յերեխաները շատ շուտ վարակվում են մի վորևե վարակիչ հիվանդությունով և շուտ մեռնում:

Ի՞նչ միջոցներով կուլել վոսկրախտի դեմ:

Յուրաքանչյուր մայր պետք ե լավ իմանա, վոր վոսկրախտի գլխավոր պատճառը յերեխայի վատ սնունդն ե. ապա, ուրեմն, մայրը պետք ե հոգա, վոր իր դավակը լավ սնունդ ստանա:

Յուրաքանչյուր մայր պարտավոր ե ինքը կերակրել իր յերեխային, միայն հիվանդության դեպքում, կաթ չունենալու դեպքում և հղիության դեպքում պետք ե թույլ տալ, վոր ուրիշ կին կերակրի յերեխային: Յուրաքանչյուր մայր պետք ե հսկի իր յերեխայի մարսողության գործարանների վրա. ամենահասարակ խանգարման դեպքում պետք ե դիմել բժշկին՝ վորոշելու՝ վոսկրախտ ե յերեխայի հիվանդությունը թե աղիքների ուրիշ խանգարում:

Վոսկրախտով հիվանդ վոջ ծծկեր յերեխային պետք ե տալ ձկան յուղ, վորի չափը վորոշում ե բժիշկը:

Վոսկրախտը բուժելի չէ. միայն պետք է ժամանակին դիմել բժշկին
և լսել ու կատարել նրա տված բոլոր խորհուրդները:

Վոսկրախտի բուժելու միջոցներից մեկն է արևն ու լույսը, վորը
մեծ նշանակություն ունի: Առհասարակ վոսկրախտով հաճախ հիվան-
դանում են այն յերեխաները, վորոնք ապրում են այնպիսի բնակա-
րաններում, ուր արև չի ընկնում, վորտեղ մուժն է լինում: Փորձերը
ցույց են տվել, վոր մուժ սենյակում մեծացող կենդանիներն ել լավ
չեն աճում, նրանց վոսկրները փափուկ են լինում ու ծուլում են:

Այդ պատճառով յուրաքանչյուր մայր պետք է հոգ տանի, վոր
իր յերեխան լույս և արևոտ բնակարան ունենա, վորպեսզի նա չըս-
տանա վոսկրախտ:

Վոսկրախտի բուժման համար շատ ոգտակար է նաև հիվանդին
աղաջրում լողացնելը, ուստի պետք է այդ տեսակ հիվանդ յերեխա-
ներին շուտ-շուտ լողացնել աղաջրում. աղի քանակի, ջրի չափի,
նույնպես թե քանի որը մեկ անգամ լողացնելը, պետք է վորոշել
բժշկի հետ և առանց նրա խորհրդի չպետք է լողացնել յերեխային:



«Ազգային գրադարան»



NL0273115

3227